

է Հայոց «սպանդարամետակրակ պաշտօնը» (Բ Մակ. 2, 3): Այս հանդէսն է ուրեմն քրիստոնէութեան բարեկենդանը, եւ անոր համար շատ ալ նման աղոր ամէն ազգաց մէջ:

Մեր բարեկենդանին երիցագոյն վկայն է Մանդակունին, որ զայն կը նկարագրէ կատարեալ հեթանոսական գոյներով: «Են ոմանք, կ'ըսէ, որ յորժամ կամին մտանել ի պահս», այս ինքն մեծ պահք մտնելէ անմիջապէս յառաջ, «փութան ի շուակալ եւ յօժանկ'» ի պատրաստութիւն խնճոյից (աստ, 146-50), որոնք այդ միջոցին կը յաջորդեն իրարու. « եւ խճողեն զպորտ եւ զօրովայնս. եւ բազում որկորատուքեամբ եւ արբեցուքեամբ շուայտանան», եւ յետոյ կը սկսին պահել (34): Ինչպէս կը տեսնենք, այս տեղ յիշուած զեղխութիւնք կը գերազանցեն ուրիշ ամէն առթիւ կատարուածները՝ թէ չափով եւ թէ տեւողութեամբ, որ զգալի են «բազում որկորատութեամբ» բացատրութեան մէջ: Մօտալուտ պահոց ժուժկալութեան յիշատակն անյազ վայելից կը մատնէր զանոնք, որոց երկուքին անհաշտութիւնը քրիստոնէին մէջ՝ ճարտարութեամբ ցոյց կու տայ հոն հայրապետը: «Ոմանց» կը վերագրէ զայս, իմանալով անշուշտ զա-